



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


415-6
№ 2 ՀԱԽՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿ № 2

ՓՈՂ ԵՍ ՎԵՐՑՐԵԼ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ,
ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵԼ ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒ



ՀՐԱՏԱՐԱԿ. ՀԱԽՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ՏԵՐԵՎԱՆ - 1927




Փ Ո Ղ Ե Ս Վ Ե Ր Ց Ր Ե Լ

ԸնկերուիթՅՈՒՆԻՑ,

ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵԼ ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒԻ

Վերամշ. ռուսերենից

Յերկրորդ հրատարակություն



ՀՐԱՏԱՐԱԿ. ՀԱԽՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԵՐԵՎԱՆ - 1927

Գրառեղիպար № 107 թ. Հ. 507. Տիրամ 3000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեանուս— 297.



ՓՈՂ ԵՍ ՎԵՐՑՐԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵԼ ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒ

ՓՈԽԱՎՈՐԻԹՅՈՒՆ ՅԵՎ. ՆՊԱՍ

Գյուղատնտեսական վարկային ընկերության չուրաբանչյուր անդամ պետք ե ճշտությամբ կատարի հետեւյալ կանոնը. «ՓՈՂ ԵՍ ՎԵՐՑՐԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ԺԱՄԱՆԱԿԻՆ ԵԼ ՎԵՐԱԴԱՐՁՐՈՒ»:

Այսն մի փոխատվություն (փոխարինաբար վերցրած փող կամ վորհե առարկա) ստացողի համար պետք ե պարզ լինի, վոր վարկային ընկերության աված փոխատվությունը վոչ մի զեղքում չի կարող դառնալ նպաստ:

Փոխատվությունը նպաստից առբերվում է զիխավորութես նրանով, վոր ՓՈԽԱՎՈՐԻԹՅՈՒՆԻՑ ՏՐՎՈՒՄ Ե ՎՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿՈՎ, և վոր արդ ժամանակը լրանալուց հետո փոխատվությունը պետք ե ԱՆՊԱՏՃԱՌ ՎԵՐԱԴԱՐՁՎԻ. Յեթե փոխատվություն ստացողն իր հոժար կամքով չվե-

ըադարձնի պարտքը, վարկային ընկերությունը
պարտավոր և ՍՏԻՊՈՂԱԲԸՐ ԳԱՆՁԵԼ իր տված
փոխառվությունը:

Նպաստը տրվում ե վորեւ աղետ պատա.
հելու դեպքում, յերբ տված փողը կամ ուրիշ
առարկաները հետ ստանալու հույս չկա: Որի-
նակ՝ անսասունները պատկելու դեպքում տված
ապահովագրական գումարները, և այլն նպաստ
են համարվում: Շատ դեպքեր են յեղել, յերբ
սովոր ժամանակ Խորհրդային կառավարությունն
ոգնության ե հասել գյուղացիությանը, այդ նպա-
տակով խոշոր գումարներ տրամադրելով նրան:
Գուցե հենց այդ ե պատճառը, վոր գյուղացի-
ները շատ անգամ նպաստը շփոթում են փոխա-
ռվության հետ և, իմանալով, վոր վարկային
ընկերությունները փոխառվություն են տալիս
գյուղական բնակչությանը պետական միջոցնե-
րից, յերբեմն ուշացնում են իրենց պարտքը,
հուսալով, վոր պետությունն այդ պարտքը կը
ների և տված գումարները հետ չի պահանջի:

Պետք ե միանգամ ընդմիջտ հրաժարվել
այդպիսի մոլորություններից: Ճիշտ ե, պետու-
թյունը գյուղբանկի միջոցով խոշոր գումարներ
ե տվել վարկային ընկերություններին, բայց
այդ գումարները տրված են վոչ թե իրրի
նպաստ, այլ այն նպատակով, վորպեսզի վար-

կային հաստատությունները վարկով ոգնեն պլու-
ղացիներին իրենց անտեսությունը բարելավելու
համար։ Յեվ վարկային ընկերությունները բո-
լորովին նպաստ բաժանող ընկերություններ չեն։
Նպաստ բաժանելն ուրիշ կաղմակերություննե-
րի գործն եւ։

Վարկային ընկերությունների մոտ լինում
են միայն այնպիսի գումարներ, վորոնք պետք ե
վերադարձվեն ուրիշներին, այսինքն այն հիմնար-
կություններին և անձնավորություններին, վո-
րոնք տվել են այդ գումարներն ընկերություննե-
րին։ Վարկային ընկերություններն իրենց հերթին
կարող են միայն այնպիսի փոխատվություններ
տալ, վորոնք պետք ե վորոշ ժամանակից հետո
վերադարձվեն։ Իհարկե, այստեղ արդեն խոսք
չի կարող լինել նպաստի մասին։ Ընդհակառա-
կը, վարկս լին ընկերությունը պետք ե փոխա-
տվություն տալու ժամանակ մահրամասն քննի,
թե ում ե նա փոխատվություն տալիս, արդյոք
հուսալի և բարեխիղճ անձնավորություն ե փո-
խառուն, թե վոչ, կարող ե արդյոք ժամանա-
կին վերադարձնել վերցրած գումարը, և այլն։ Հա-
կառակ դեպքում, ընկերությունն ինքը կը տու-
ժի և հնարավորություն չի ունենա իր պարտքե-
րը վճարելու, և այդ պատճառով ել այդ շրջա-
նի գյուղացիությունը կը զբկվի վարկային ող-

նությունից, վորովհետեւ ԱՆՃՇՏԱՊԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎՈՐ ՎՈՐ ՓՈՂ ԶԻ ՏԱ:

Իսկապէս, ով կը վստահի իր փողը տալ մի ընկերության, վորն այդ գումարները նպաստի ձևով ե բաժանելու, կամ վորի անդամներն անպարտաճանաչ և անճշտապահ են: Պետք ե լենթադրել, վոր այդպիսի ընկերությանը վոչ վոք փող չի տա և, ընդհակառակը, նրանք եւ ովքեր արդեն գումարներ տվել են ընկերությանը, ամեն կերպ աշխատելու լեն տվածը վորքան կարելի յե շուտ դուրս բերել այդտեղից: ՊԱՐԶ ե, ՎՈՐ ԱՅԴՊԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐ ՄԻԱՅՆ ԶԻ ԶԱՐԳԱՆԱ, ԱՅԼ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԿԸ ԹՈՒԼԱՆԱ ՑԵՎ ԿԸ ՓԱԿՎԻ:

Իսկ լեթե փոխառուները (փող վերցնող անդամները) ժամանակին և կանոնավոր վճարեն իրենց պարտքերն ընկերությանը, այդ գեղագում վարկային ընկերության գործերը լավ դրության մեջ կը լինեն, կտրիւլանա գյուղացիության վըստահությունը գեղի ընկերությունը, ավելցուկ ունեցողները կամ վարու նպատակով փոքրիկ գումարներ խնայած գյուղացիներն ավանդ կը տան ընկերությանը, և այդպիսով ընկերության միջոցները կուժեղանան: Բացի դրանից վարկ տվող կազմակերպություններն եւ ավելի շատ վարկ կտան ընկերությանը:

Փոխատվությունները ժամանակին վերադարձնելն անհրաժեշտ է մեկ ել նրա համար, վոր ընկերությունները, սովորաբար, քիչ միջոցներ են ունենում և հնարավորություն չեն ունենում բոլոր կարիք ունեցողներին բավարարելու: Մինչդեռ ընկերության ամեն մի անդամը, վորը պատասխանատվություն ե կրում ուրիշների համար, իրավունք ունի պահանջելու, վոր իրեն ել կարիք յեղած դեպքում փոխատվություն տա ընկերությունը: Իսկ յեթե վոր վերցրած անդամները ժամանակին չվերադարձնեն փոխատվությունը, ընկերությունն ել հնարավորություն չի ունենա բավարարելու այդպիսիներին: ՈՒՍՏԻ ՅԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՊԱՀԱՆՁԵՆ, ՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՓՈՂ ՎԵՐՑՆՈՂՆԵՐՆ ԱՆՊԱՏՃԱՌ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ ՀԵՐԹՈՎ ԿՈԴՏՎԵՆ ԲՈԼՈՐԸ, ՈՎՔԵՐ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ:

Ընկերության միջոցով փողը պետք ե շրունակ մի անտեսությունից անցնի մյուս տընտեսությունը և ամենքին ել ոգուտ տա: Միայն այդպիսի ընկերությունը կը լինի կենդանի ընկերական գործ, և վոչ թե մի կանգնած ճահիճ, վորտեղ անդամները ձգտում են փոխատվու-

թյունը նպաստ դարձնել և չփարել իրենց
պարտքերը:

Ինչպիսի պայմաններ են հարկավոր, վոր փո-
խատվությունները ժամանակին վերադարձվեն:

Ի հարկե, ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ ՀԱՐԿԱՎՈՐ Ե,
ՎՈՐ ՓՈԽԱՌՈՒԻ ԱՆԴԱՄԸ ԳԻՏԱԿՑԻ, ՎՈՐ ՆԱ
ՊԱՐՏԱՎՈՐ Ե ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱ-
ԿԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ. և միաժամանակ պետք ե
նա լուրջ մտադրություն ունենա այդ բանը կա-
տարելու համար:

Մարդիկ իրար, նման չեն լինում: Կան
մարդիկ, վորոնք ճշտապահ են ու պարտաճա-
նաչ, և պարտք ունենալու դեպքում, ամեն մի-
ջոց ձեռք են առնում պարտքը ժամանակին
վճարելու համար: Կան այնպիսիներն ել, վորոնք
թեև պատրաստ են իրենց պարտքը վերադարձ-
նելու, բայց կարծում են, թե անհրաժեշտ չե
ժամանակին վճարել, և ուշացնում են: Նրանք
այսպես են մտածում. «Ի՞նչ կարիք կա շտապե-
լու, այսոր չի լինի, վաղը կը վճարեմ, մինչեւ
մեկ-յերկու շոբաթ ուշ վճարեցուց դժբախտու-
թյուն կը պատահի»: Յեվ, վերջապես, կան
այնպիսիները, վորոնք աշխատում են վորքան
կարելի յե շատ փող ստանալ, և ստանալուց
հետո, ամեն կերպ խուսափում են պարտքը վե-
րադարձնելուց:

Գյուղացիները միմիանց լավ են ճանաչում,
և շատ հեշտ ե վորոշելը, թե վոր գյուղացին,
ինչպես ե վերաբերվում դեպի իր պարտքերը,
մտապի՞ր ե արդյոք ժամանակին վճարել ընկե-
րությունից վերցրած պարտքը, կամ թե չե, թեև
կը վճարի, սակայն մի կերպ, ժամանակն անց-
նելու հետո, մի քանի անգամ հիշեցնելուց հե-
տո, կամ վերջապես բոլորովին խույս ե տա-
լիս փոխատվությունը վերագարձնելուց Բարե-
խիղճ և ճշապահ գյուղացիներին կարելի յե
փոխատվություն տալ անձնական վստահու-
թյամբ, յերկը կը մարդկանց փոխատվու-
թյուն տալու ժամանակ ընկերությունը պետք
է միջոցներ ձեռք առնի ապահովելու պարտքը
ժամանակին վճարելու հնարավորությունը, ո-
րինակ՝ ընկերությունը պետք ե պահանջի, վոր
գյուղացին կայքը գրավ դնի, կամ՝ յերաշխավոր
ներկայացնի, վորովինեակ յերաշխավորը կը ստի-
պի փոխառուին պարտքը ժամանակին վճարել:
Ինչ վերաբերում ե յերրորդ կարգի մարդկանց,
այդպիսիներին ամեննեին չպետք ե փոխատվու-
թյուն տալ:

Հենց այդ պատճառով ել գյուղատնտեսա-
կան վարկը արվում ե գյուղացիներին վարկա-
ին ընկերությունների միջոցով, վորովինեակ
վարկային ընկերությունները հնարավորություն

ունեն տեղում պարզելու, թե ում կարելի յե
վստահել գյուղատնտեսական վարկը, ո՞վ ե գյու-
ղացիներից բարեխիղմն ու ճշտապահը, ո՞ւմ,
ինչքան կարելի յե տալ, և դրա համեմատ ել
բաժանել վարկերը:

Ընկերությունն ել պետք ե այնպես կազ-
մակերպվի, վոր նրա վարչությունը հնարավո-
րություն ունենա լավ ճանաչել իրենց անդամ-
նորին: Դրա հայար ել աշխատում են ընկերու-
թյուններ կազմակերպել փոքր շրջանների հա-
մար, կամ թե չե ընկերության վարչության
կամ խորհրդի կազմի մեջ ընտրում են գյուղա-
ցիներ՝ զանազան գյուղերից, վորպեսզի նրան-
ցից ճիշտ տեղեկություններ ստանան իրենց
համագյուղացիների մասին:

Բայց փոխառու անդամի ազնվությունն ու
բարեխղճությունը բավական չեն, վորպեսզի
փոխառվությունները ժամանակին վերադարձ-
վեն: Դրա համար հարկավոր են նաև մի շարք
պայմաններ, վորոնց մասին ել մենք այժմ
կը խոսենք:

ՓՈԽԱՎՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ

Բոլորվին միևնույն չե, ինչպես շատերը
կարծում են, թե ինչ նպատակով ե ընկերու-
թյունից փոխառվություն վերցնում փոխառուն:

Յեթե նա փոխառվություն ե ստանում լուրջ և
ողտակար զործի համար, վորը հնարավորու-
թյուն կը տա նրան թե վերադարձնել փոխա-
ռվությունը, և թե վորոշ շահ ստանալ, ապա
նա ընկերության նշանակած ժամկետին ել կը
վճարի իր պարտքը տոկոսներով, և բացի դրա-
նից կը բարելավի իր տնտեսությունը։ Այն փո-
խառվությունները, վորոնք տրվում են ձի, ա-
նասուն, գութան, սերմացու գնելու, կամ ցանքս
անելու, կամ այդին մշակելու համար, կոչվում են
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ։ Այդպի-
սի փոխառվությունները բարելավում են գյու-
ղացու տնտեսությունը և ավելացնում նրա յե-
կամուար։ Գյուղատնտեսական վարկը հենց այն
գումարներն են, վոր պետությունը տալիս ե
գյուղացիությանը, վորպես արտադրական փո-
խառվություններ, վորովինետե պետությունը
ձգտում ե այդպիսով վոչ միայն ոգնել գյուղա-
ցուն, թեթևացնել նրա գրությունը, այլ և ավե-
լացնել նրա տնտեսության մեջ տրտադրվող
մթերքները կամ, ինչպես ասում են, բարձրա-
ցնել նրա արտադրությունը։ Դրա համար ել
պետությունը պայման ե գնում ընկերությանը,
վոր նա փոխառվություններ տա միայն ոգտա-
վետ նպատակների համար։

Ամեն մի գյուղացի, բացի տնտեսական կա-

ովիքներից, ունի մի շարք այլ կարիքներ, վորը
բավարարելով, նա բոլորովին չի բարձրացնի իր
տնտեսությունը և չի ավելացնի իր յեկամուտը։
Ալդպիսի կարիքների համար տրված փոխառվու-
թյունը հնարավորություն չի տա զյուղացուն
վերադարձնել իր պարտքն ընկերությանը։ Ըն-
տանիքի առորյա կարիքների համար, որինակ,
հագուստի, ուտելիքի վրա կարելի յե ծախսել
միայն այն գումարներից, վոր ստացվում են
տնտեսությունից։ ԻՍԿ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՎԵՐ-
ՑՐԱԾ ՓՈՂԾ ԿԱՐԵԼԻ ՑԵ ԾԱԽՍԵԼ ՄԻԱՅՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՐ-
ՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ,

Դրա համար ել անհրաժեշտ ե, վոր փոխա-
թվություն տալու ժամանակ ընկերությունն
ել, փոխառուն ել միասին պարզեն այն հարցը,
թե ինչ կարիքների համար ե տրվում փոխա-
ռվությունը։ Ցեթե փոխառվությունը տրվում ե
զյուղացու տնտեսությունը բարձրացնելու, նրա
յեկամուտն ավելացնելու նպատակով, տպա փո-
խառվություն պետք ե տալ, հակառակ դեպ-
քում՝ ընկերությունն իրավունք ունի մերժել,
և բարեխիղճ անդամն ել չպետք ե կողմնակի նպատակների համար փոխառվություն խնդրի ընկերությունից։

ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԱՓՅ

Պարզ է, վոր գյուղացին փոխատվություն ստանալուց հետո պետք է այդ գումարը դորձագրի այն կարիքների համար, վորոնք նկատի յին առնված փոխատվությունը տալու ժամանակ։ Չնայած վոր այդ միանգամայն հասկանալի յէ, բայց և այնպես պատահում են դեպքեր, յերբ իրենք ընկերություններն արգելքներ են ստեղծում փոխատվությունն իր նպատակին ծառակեցնելու համար։ Որինակ՝ ասենք, թե գյուղացին ուզում է յեզ գնել, բայց փողը չի բավականացնում, 60 ռ. պակասում եւ նա դիմում է ընկերությանը և 60 ուղղի փոխատվություն եւ խնդրում։ Ընկերության վարչությունը գտնում է գյուղացու դիմումը ընդունելի, հավանություն է տալիս փոխատվության նպատակին, բայց դրամարկղում բավականաչափ փող չինելու պատճառով, գյուղացուն տալիս է միայն 35 ուղղի։ Ի՞նչ պետք է անի փոխառու անգամը։ Թվում ե, թե նա պետք է հրաժարվի փոխառությունից, վորովինետե միենույն ե, 25 ռ. դարձյալ պակասում ե, նա չի կարող յեզ գնել։ Մյուս կողմից նա մտածում է. «Ի՞նչո՞ւ չվերցնել, այն ել շատ ցածր տոկոսով»։ Չե վոր նրա տնտեսությունը հազար ու մի կարիք ունի։

ՅԵԹԵ այդ փողը պետք չգա յեզ գնելու համար,
գյուղացին կողտագործի այդ գումարը մեկ ու-
րիշ տեղ, նույն իր տնտեսության կարիքների
համար:

Ահա և արդպիսի նկատառումներով գյուղա-
ցին չի կարողանում հրաժարվել փոխատվու-
թյունից, իսկ ընկերությունը գրում ե իր հա-
շիմսերում, վորպես թե այդ փոխատվությունը
տվել ե յեզ գնելու նպատակով. Լավ ե, չեթե
վերցրած դումարն ել գործադրվում ե հարկա-
վոր բանի համար, տնտեսության պետքերի հա-
մար. Բայց հենց դժբախտությունն այն ե, վոր
փոխառուն շատ դեպքերում չի կարողանում
ստացած փողը շահագետ գործի մեջ դնել, յեր-
բեմն թեկուղ այն պատճառով, վոր հնարավոր
չի լինում միանգամից ձեռք բերել հարկավոր
երը. Այնինչ գյուղացին ուրիշ շատ ու շատ կա-
րիքներ ունի, նա այդ փողը կամ նրա մի մասը
ծախսում ե իր անձնական կամ ընտանիքի կա-
րիքների համար.

Նման դեպքերում ամենաբարեխիղճ փոխա-
ռուն շատ դժվար կացության մեջ է դրվում.
Աղջկա համար գնված հագուստը հագուստ ել
մնում ե, և նրա տնտեսությանը վոչ մի ողուտ
չի տալիս. Իսկ գյուղացուն շատ հարկավոր լըծ-
կանը, վորը պետք ե վարեր նրա հողը, բարե-

լավեր նրա տնտեսությունը, ավելացներ նրա
յեկամուար, վերջի վերջո ձեռք չի բերվում:
Յեվ այնուհետեւ գյուղացին դես ու դեն ե ընկ-
նում, սրան-նրան դիմում, փող խնդրում, վոր
տանի վճարելու ընկերությանն իր պարագը: Յեվ
զրա վերջն ել լինում ե այն, վոր գյուղացին
փոխատվություն վերցնելով, վոչ միայն չի բա-
րելավում իր տնտեսությունը, այլ ընդհակառա-
կը, բեռ ե դնում իր շինքին:

Հենց զրա համար ել Ընկերություններ
ՊԵՏՔ ե ԱՅՆՔԱՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱ ԱՆ-
ԴԱՄՆԵՐԻՆ, ՎՈՐ ՓՈԽԱՌՈՒՆ ԿԱՐՈՂԱՆԱ ԻՐ
ԿԱՐԻՔԸ ՀՈԳԱԼ, ԱՅՆ ԿԱՐԻՔԸ, ՎՈՐԻ ՀԱՄԱՐ
ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ե ՎԵՐՑՆՈՒՄ Ե Ընկերու-
թյուններ:

ԲԱՅՑ ՓՈԽԱՌՈՒՆ ԵԼ ԶՊԵՏՔ Ե ԸՆԴՈՒՆԻ
ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՅԵԹԵ ՆԱ ԱՎԵԼԻ ՔԻՉ Ե,
ՔԱՆ ՊԱՀԱՆՁՈՒՄ Ե ԻՐ ԿԱՐԻՔԸ:

Ի՞նՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾԱՌԱ-
ՅԵՑՆԵԼ ԻՐ ՆՊԱՏՈՒԿԻՆ

Իհարկե յեթե փոխառուն իր ստացած փո-
խառվությունը գործադրում է կողմնակի նպա-
տակի համար, ապա զրա պատճառը միայն այն
չե, վոր ընկերությունը նրան բավականաչափ
փոխառվություն չի տվել, կան և ուրիշ պատ-


ճառներ, որինակ, փոխառուն փող ունենալով
ձեռքին, չի կարողանում ձեռք բերել այն, ինչի
համար տրված ե փոխառությունը, և այդ գու-
մարով բոլորովին ուրիշ, գուցե և վոչ անհրա-
ժեշտ կարիք ե հոգում, կամ զուցե նա հենց
սկզբից մտադրվել ե խարել ընկերությանը:

Դրա հետեանքն այն ե լինում, վոր փողն
իզուր ծախսվում ե, բեռ ե դառնում տնտեսու-
թյան համար, յեվ փոխառուն չի կարողանում
վերադարձնել փոխատվությունն ընկերությանը:
Դրա համար ել ընկերության կանոնադրության
մեջ նախատեսնված ե մի կետ, վորի համաձայն
ընկերությունը կարող ե փոխառուից պահանջել,
վոր նա իր պարտքը վճարի ժամանակը լրանա-
լուց առաջ, յեթե փոխառուն փողը չի ծառայե-
ցնում այն նպատակին, վորի համար տրված ե
նույն փոխատվությունը: Հրաժարվելու դեպ-
քում փոխատվությունը գանձվում ե ստիպողա-
կան միջոցներով:

Իսկ ի՞նչպես ե ընկերությունն ստուգում,
թե արդյոք փոխառուն ստացած գումարն իր
նպատակին ե ծառայեցրել, թե վոչ: Այդ կարե-
լի ստուգել մի քանի ճանապարհներով: Պա-
տահում են դեպքեր, յերբ ընկերությունը փողը
տալիս ե վոչ թե փոխառուին, այլ այն անձնա-
վորությանը, վորից փոխառուն ուզում ե վորե-

վե իր գնել։ Ուրիշ զեպքում ընկերությունը հանձնարարում է խորհրդի անդամներին հսկել վոր փոխառուներն ընկերությունից ստացված փոխառվությունները չգործադրեն կողմնակի նպատակների համար։ Իսկ խորհրդի անդամներն այդ կարող են անել, վորովհետև նրանք իրենք գյուղացիներ են և միաժամանակ՝ հարևաններ։ Վերջապես լինում են զեպքեր, յերբ ընկերության գարչության անդամներն անձամբ շրջում են գյուղերը և տեղում ստուգում, թե ինչպես են ոգտագործվել փոխառվությունները։

Բայց այդ բոլոր միջոցներն ել բավական չեն։ Հարկավոր ե, վոր ընկերության բոլոր անդամներն ունենան այն գիտակցությունը, վոր վարկային ընկերությունից ստացված փոխառվությունը կարելի յե ծախսել միայն տնտեսության վրա, միայն այն կարիքների համար, վոր ընկերությունն անհրաժեշտ ե գտել և դրա համար ել փող ե ավել անդամին։ Պետք ե բոլորը հետեւն այդ հարցին, կամ ինչպես ասում են, ՊԵՏՔ ե ՀԱՌԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԼԻՆԻ ԱՄԵՆ ՄԻ ՓՈԽԱՌՈՒԻ ՎՐԱ, ՎՈՐ ՆԱ ԸՆԿՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐՆ ԱՆՊԱՏՃԱՌ ՇԱՌԱՑԵՑՆԻ ԻՐԵՆՑ ՆՊԱՏԱԿԻՆ։ Պետք ե լավ հոգկանալ, վոր յեթե մեկը խո-



բում ե ընկերությանը և փոխատվությունն ե
վերցնում ու գործադրում վոչ իր նպատակի
համար, նա դրանով վոչ միայն իրեն ե մխաս
տալիս, այլ և մեծ մխաս ե պատճառում իր հա-
րեանին, ընկերության մյուս անդամներին և
քայլայում ե ընդհանուր գործը։ ՆԱ ԹԵ ԶԼՐ-
ԿՈՒՄ Ե ՄՅՈՒՄ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՎԱՐԿԱՑԻՆ
ՈԳՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ԹԵ ԻՉՈՒՐ ԾԱԽՍՈՒՄ, ՓԶԱ-
ՑՆՈՒՄ Ե ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ՓՈՂԵՐԸ ՅԵՎ ԹԵ
ԽԱԽՏՈՒՄ Ե ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՏԱՀՈՒԹՅՈՒՆՆԵ-
ԴԵԳԻ ՄՅՈՒՄ ԱՆԴԱՄՆԵՐԸ։

Պատահում ե յերբեմն, վոր փոխատվու-
թյունը նպատակին չծառայեցնելը գեռ չի նշա-
նակում, վոր փոխատվությունն անտեղի և անո-
գուտ գործի համար ե ծախսվել։ Որինակ, պա-
տահում ե, վոր դյուղացին փոխատվությունն ե
վերցնում յեզներ գնելու համար, բայց յեզների
փոխարեն նա կով ե գնում և լավ տեսակի սեր-
մացու յե ձեռք բերում։ Այդ դեպքում պետք ե
ընդունել, վոր փոխատվությունն այնուամենայ-
նիվ շահավետ գործի համար ե ծախսվել, անտե-
սության կարիքների համար ե գործադրվել, և
դյուղացին դրանից կարող ե ոգտվել, յեկամուտ
ստանալ ու ժամանակին վերադարձնել իր պարտ-
քըն ընկերությանը։ Իհարկե, ընկերության
վարչությունը նման դեպքում չպետք ե փոխա-

տվությունը ժամանակից շուտ պահանջի, բայց
նա ճիշտ կը վարվի, յեթե մյուս անդամ նույն
փոխառությունը չվերաբերվի։ Դրա
համար եր, փոխառուն պետք ե ՆԱԽՈՐՈՔ ՊԱՅ-
ՄԱՆԱՎՈՐՎԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԵՏ ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈԽԵԼՈՒ
ՀԱՄԱՐ, ՑԵԹԵ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ՍՏԻՊՈՒՄ
ԵԵ ՆՐԱՆ ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԴՐԵԼ
ՎՈԶ ԱՅՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ՎՈՐ
ՏՐՎԱԾ Ե.

Բայց բոլորովին այլ բան կլինի, յեթե նա
փոխառությունը ծախսի կեր ու խումբ համար,
կամ անպետք իրեր գնի։ Նման դեպքերում այ-
սո վատահություն չի լինում, թե փոխառուն
ժամանակին կը վերադարձնի իր պարագը։ Ուս-
տի և ընկերությունը պետք ե խիստ միջոցների
դիմի փոխառությունը դանձելու համար և հե-
տո, կրկնվելու դեպքում, պետք ե կանգ չառնի
նույնիսկ փոխառությունից հեռացնե-
լու առաջ։

ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ (ՎԵՐԱԴԱՐՁԵ-
ԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ)

Վորպեսզի փոխառությունները ժամանա-
կին վերադարձվեն, վորպեսզի փոխառուները
ճշտապահ լինեն, հարկավոր ե, վոր փոխառու-

թլան ժամկետն ել նշանավկի խելացի կերպով:
Յեվ զուցի այդ ամենագլխավոր ոլայմանն և,
վորպեսզի անդամները ժամանակին վճարեն ի-
րենց պարտքն ընկերությանը։ Այդ հարցին պետք
ե ընկերությունն ել, անդամներն ել մոտենան
ամենայն զգուշությամբ։

ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ
ԺԱՄԿԵՑԸ ՊԵՏՔ Ե ՀԱՄԱՉԱՅՆԵՑՆԵԼ, ԱՅՆ
ԺԱՄԱՆԱԿԻ ՀԵՏ, ՅԵՐԲ ՓՈԽԱՌՈՒԻՆ ՅԵԿԱ-
ՄՈՒՏ Ե ՈՒՆԵՆԱԼՈՒ, յերբ նա, իբոք, կարող
կլինի վերադարձնել իր պարտքը, առանց դեռ
ու դեն ընկնելու, նոր պարտքեր անելու։ Հաս-
կանալի յե, վոր միայն յերկրագործությամբ
պարապող գյուղացու մոտ փող կլինի միայն
բերքը հավաքելուց հետո և, հետեւբար նրան
փոխատվություն տալու դեպքում պետք ե ժամ-
կետը նշանակել այնպես, վոր նա հնարավորու-
թյուն ունենա բերքը հավաքելուց հետո վճարել,
և չպետք ե այնպես ել անել վոր նա շտապի
ժամանակից շուտ վերջացնել իր աշխատանքնե-
րը և եժան գնով ծախել իր՝ բերքը։

Իսկ այն տեղերում, վորտեղ գյուղացիու-
թյունն ունի նաև կողմանակի զբաղմունք, կա-
րելի յե ժամկետը համաձայնեցնել նրա կողման-
ակի յեկամատի ժամանակի հետ։

Բայց միայն այդ չե, վոր ընկերությունը

պետք եւ հաշվի առնի փոխատվության ժամկետը
նշանակելիս, Ընկերությունը պետք եւ փոխա-
ռուի հետ միասին ամեն անդամ ժանրամասն
քննի այն հարցը, թե յե՞րբ կարող եւ փոխառուն
առանց դժվարությունների վերադարձնել փոխա-
տվությունը, և նրա համեմատ ել նշանակել
ժամկետը։ Վորքան ընկերությունն ավելի շատ
ուշադրություն նվիրի իր փոխառուների անտե-
սության առանձին պայմաններին, այնքան ա-
վելի ամուր հիմքերի վրա կը դրվի վարկային
գործը, այնքան ավելի լավ կը զարգանա ընկե-
րությունը։

Հաճախ այսպես են դատում. փոխառուն
պետք եւ վճարի իր պարտքն այն յեկամուտից,
վոր նա ստանալու յեւ փոխատվության զումա-
րով ստեղծած ձեռնարկությունից։ Դրա համար
ել, յեթե փոխատվությունը վերցված եւ յեզ-
ներ գնելու նպատակով, իսկ յեզներն իրենց
ծախոր հանելու յեն յերկու տարվա ընթացքում,
նշանակում եւ փոխատվության ժամկետն ել պի-
տի լինի յերկու տարի։ Դա այնքան ել ճիշտ չե,
վորովհետեւ շատ քիչ եւ պատահում, վոր հնարա-
վոր եւ լինում հեշտությամբ վորոշել, թե այս
կամ այն ծախքը վորքան ժամանակում եւ ծած-
կում իրեն։ Գյուղացին հաշվապահական մատ-
րաններ չի պահում, վոր իր անտեսության վրա

ծախսվող ամեն մի կոպեկը հաշվի առնի այն-
ողես, ինչպես այդ անում ե, որինակ, վորեւ
գործարանային ձեռնարկություն։

Ինչ խոսք, վոր ավելի կարևոր ե պարզել
թե փոխառութի տնտեսությունը մոտավորապես
ինչքան յեկամուտ ե տալիս, և ինչ գումարի
փոխատվություն նա պետք ե վերցնի, վոր կա-
րողանա ժամանակին վճարել իր պարտքը, թող-
նելով իրեն այնքան, ինչքան հարկավոր ե իր
տնտեսությունը կառավարելու համար։ Ահա թե
ինչու միենույն նպատակով տրվող փոխատվու-
թյունների համար բոլորովին տարբեր ժամ-
կետներ կարող են նշանակվել։

Հետեաբար, վորքան ավելի ուժեղ ե տնտե-
սությունը, վորքան նա ավելի շատ յեկամուտ ե
տալիս, այնքան ավելի հեշտ կը լինի փոխա-
ռութի համար փոխատվությունը վերադարձնելլ։
Ըսդհակառակը, վորքան թույլ ե տնտեսությու-
նը, այնքան ավելի դժվար ե պարտքը կարճ
ժամանակից հետո վճարելլ։ Դրա համար ել
չքափորներին փոխատվություններ տալու դեպ-
քում պետք ե ավելի յերկարատե ժամկետներ
նշանակել, քան` ունեսորներին, թեկուղ միենույն
նպատակի համար վարկավորելիս։

Վորպեսզի փոխառումները չը դժվարանան
պարտքը ժամանակին վճարել, ոնհրաժեշտ ե,

վոր յերկարատե փոխատվություններ տալու դեպքերում ընկերությունը պարտավորեցնի փոխառութին, վոր նա պարտքը վճարի մաս-մաս, այն ել բերքը հավաքելու ժամանակի Բացի գրանից մասնակի վճարումների չափն ել պետք ե այնպես վորոշել վոր փոխառուն սկզբում պարտքի փոքր մասը վճարի, իսկ հետո, յերբ տնտեսությունը կամրապնդվի, կարելի յե ավելի մեծ գումարներ նշանակել:

Այս ձեռվ ընկերությունը հնարավորություն կունենա շաբունակ հսկելու և վորոշելու, թե ինչպես ե ինքը գնահատել փոխառուի վարկունակությունը, արդյոք ճիշտ, թե սխալ, և հարկ յեղած դեպքում կարող ե միջոցներ ձեռք առնել ընկերության շահերը պաշտպանելու համար։

Անցյալում, շատ քաղաքներում գոյություն ունելին արհեստավորների վարկային կամ փոխառության գործական ընկերություններ, վորոնք իրենց անդամներին փոխատվություններ ելին տալիս այն պարագանով, վոր ամեն շաբաթ պարտքից վորոշ գումար վերադարձվի։ Չնայած, վոր այդ փոխատվությունները տրվում ելին չքավոր արհեստավորներին, բայց և այնպես փոխառությունները ժամանակին ելին վերադարձվում, և ընկերություններն ել ծաղկած վիճակում ելին։ Այդ փորձը ցուց ե տալիս, վոր փոխատվու-

թյունը մաս մաս վերադարձնելու կարգը բավա-
կան խելացի և նպատակահարմար բան եւ:

Համենայն դեսլո՛ թե ընկերությունը և թե
փոխառուն պետք եւ ամենայն ուշադրությամբ
վերաբերվեն դեպի ժամկետներ նշանակելու
հարցը, և այնպիսի ժամկետներ վորոշեն, վոր
փոխառուն հնարավորություն ունենա ժամանա-
կին վերադարձնելու ընկերությունից վերցրած
փոխառավությունը: Պետք եւ միշտ հիշել վոր
ինչքան ավելի հաճախ մասնակի վճարումներ
նշանակվեն, և, հետեւաբար վորքան ավելի գու-
մարով փոքր լինեն այդ վճարումները, այնքան
ավելի հեշտ կը լինի փոխառուի համար ճշտա-
պահությամբ վճարելը:

Այդ բոլորից զատ պետք եւ հիշել նաև այն,
վոր ընկերությունը փոխառավությունների ժամ-
կետը նշանակելիս, հաշվի լեւ առնում վոչ միայն
փոխառուի հնարավորությունները, այլ և այն
ժամկետները, յերբ ինքն եւ վերադարձնելու իր
ստացած փոխառավությունները գրուզբանկին,
վորը յերկարատև փոխառավություններ կարող ե
տալ միայն վորոշ սահմաններում:

Դրա համար ել ընկերության անդամները
պետք եւ վորոշ զիջումներ անեն ընկերություն-
ներին իրենց հնարավորությունների համե-
մատ:

ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԻ

Մենք արդեն ասացինք, վոր ընկերության վարչությունը պետք է լավ ծանոթանա իր փոխառուների գրությանը, պարզի, թե ինչպիսի տնտես և նա, ճշտապահ և արդյոք, կը կարողանա արդյոք խելացի կերպով ոգտագործել տրված փոխառությունը և ժամանակին ել վերադարձնել. Ծնդամների վորոշ մասի վերաբերյալ ընկերության վարչությունը, իրոք, հնարավորություն կունենա այդպիսի տեղեկություններ հավաքել, և առանց յերկուողի կարող և փոխառություններ տալ անձնական վստահությամբ: Հնարավոր և պարզել նաև այն մարդկանց անձնավորությունը, վորոնք առհասարակ արատավոր և անբարեխիղճ մարդիկ են, և վորոնց փոխառություն չի կարելի տալ: Այդպիսիները չպետք է ընդունվին նաև ընկերության անդամներն մի շարք այլ կարգի գյուղացիներ, վը որոնց նկատմամբ ընկերության վարչությունը լիակատար վստահություն չի ունենա, վոր նըրանք կը կարողանան ժամանակին վերադարձնել փոխառությունները:

Այդպիսի դեպքերում ընկերության վարչությունը, նպատակ ունենալով ապահովել ընկերության շահերը զանազան վնասներից, փոխառությունը պահանջում է լրացուցիչ տպահովություն:

Այդպիսի ապահովություն կարող ե լինել.

1. Փոխատվության հաշվին ձեռք բերված և թե այլ տեսակի կալքի գրավ դնելը, մանավանդ զրավ են դնում փոխառուի տնտեսության արտադրանքը (մթերքները), և սովորաբար, գրավ են ընդունում վոչ ամեն տեսակի կալք, այլ միայն այնպիսի, վոր կարող ե հեշտությամբ ծախվել պարտքը ծածկելու համար:

2. Տեղական հասարակական-տնտեսական կազմակերպությունների յերաշխավորությունը, որինակ, փոխոգկոմների յերաշխավորությունը: Այդպիսի յերաշխավորությունն ընկերությունն ընդունում ե այն դեպքում միայն, յեթե հավատացած ե, վոր կազմակերպությունը հարկ յեղած դեպքում կը կարողանա վճարել անբարեխիղ փոխառուի պարտքը: Իսկ այդպիսի վստահություն կարելի յե համարել այն, վոր որինակ, փոխոգկոմն իր տըամագրության տակ յեղած գումարները կամ նրանց մի մասը պայմանական ավանդ տա վարկային ընկերությանն այն հաշվով, վոր ավանդն իրավունք վերապահի փոխոգկոմին՝ յերաշխավորություններ տալ 3 - 4 անգամ ավելի գումարների համար, քան ավանդն ե կազմում:

Ավանդի փոխարեն փոխոգկոմի կարող ե գրավ դնել իր կալքը:

3. Վարկունակ գլուղացիների յերաշխավո-

բութիունը: ԲԱՅՑ ԱՅԴՊԻՍԻ ՅԵՐԱՇԽԱՎՈՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼԻՄ ՊԵՏՔ Ե ՇԱՏ ԶԴՈՒՇ
ԼԻՆԵԼ, ՎՈՐՈՎՀԵՏԵՎ, ԿԱՐՈԴ, Ե ՊԱՏԱՀԵԼ, ՎՈՐ
ԱՅԴՊԻՍԻ ՅԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՏ
ԹԱՌԵ ՆԱՏԻ ՓՈԽԱՌՈՒԻ ՎՐԱ, ՎՈՐ ՓՈԽԱ-
ՐՈՒԻՆ. ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՇԱՀԱԴՈՐԾՄԱՆ · ՅԵՆ
ԹԱՐԿՎԻ ՅԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿՈՂՄԻՑ: Մինչդեռ
ընկերության նպատակն ե, ընդհակառակը, ոգ-
նել աշխատավոր գյուղացիությանը, ազատել
նրան շահագործումից: Մյուս կողմից պետք ե
հիշել վոր յերաշխավորը նույնչափ պատասխա-
նատու յե փոխատվությունը ժամանակին վճա-
րելու համար, վորքան և փոխառուն, ուստի և
պետք ե յերաշխավորել միայն վստահելի գյու-
ղացիների համար:

Այն չքավոր գյուղացիները, վորոնք հնարա-
վորություն չունեն ընկերությունից առանձին-
առանձին փախատվություններ ստանալ, պես ոք
ե միանան և ընկերություններ կազմեն (արտեր-
ներ, մեքենագործակուրծ. ընկերություններ և
այլն) կամ կազմեն այնպիսի խմբեր, վորոնք
կոլեկտիվ աշխատանք են կատարում իրենց
տնտեսություններում, և այդ ճանապարհով փո-
խատվություններ ստանան վարկային ընկերու-
թյուններից:

Այսպիսի կազմակերպություններին վարկա-

վորեին ավելի հուսալի գործ ե, վորովհետեւ վախատվության հաշվին ձեռք բերված իրերն ել լավ կոգտագործվեն, մի բան, վոր հնարավորություն կը տա փոխառուներին վերադարձնելու վերցրած փողը:

ՓՈԽԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄԸ

Մինչև այժմ մենք խոսում ենք այն պատմանների մասին, վորոնք անհրաժեշտ են, վորպիսդի փոխատվությունը ժամանակին վերադարձվի: Յեթե մեկը փոխատվություն ե ստացել, անպատճառ պետք ե ժամանակին վերադարձնի այն՝ ամբողջովին կամ մասամբ, նայած թե, ինչ պայմաններով ե վերցրել փոխատվությունը: ԱՄԵՆ ՄԻ ՓՈԽԱՏՎՈՒՄ ՊԵՏՔ Ե ՀԻՇԻ, ՎՈՐ ՆԱ ՊԱՐՏԱՎՈՐ Ե ՆՇԱՆԱԿՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ՓՈԽԱՏՎՈՒՄԸ, ԱՌԱՆՑ ՍՊԱՍԵԼՈՒ, ՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԻՇԵՑՆԻ ԱՅԴ ՄԱՍԻՆ. ՄԻԱՅՆ ԱՅԴ ԿԱՆՈՆԸ ՃԵՏՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊԲՈՒՄ ՓՈԽԱՌՈՒՆ ԿԱՐՈՂ Ե ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՆ ՎԵՐՑՆԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ:

Ժամանակին չվերադարձնելը վոչ միայն իրենց ե վնասում, այլ և ընկերության բոլոր անդամներին: Ընկերության անդամները պետք ե շարունակ հորդորեն միմիանց ճշտությամբ վճարելու փոխատվությունները, իսկ ընդհանուր

ժողովներում պետք է ժողովի անունից հանդիմանել այն անգամներին՝ վորոնք ժամանակին չեն վճարել իրենց պարտքն ընկերությանը. Ավելի ԱնձնՏԱՊԱՀՆԵՐԻՆ ՊԵՏՔ է ՈՒՂՂԱԿԻ ՀԵՌԱՑՆԵԼ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ:

Ինչպես կարսիր բանակում զոյություն ունի խիստ կարգապահություն և բոլորը յենթարկվում են վորոշ կանոնների, այնպես ել վարկային ընկերություններում պետք է բոլորը խըստությամբ կատարեն հետեւյալ կանոնը. «ՓՈՂ ԵՍ ՎԵՐՅՐԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ», վորովետե առանց դրան, ԱՌԱՆՑ ՎԱՐԿԱՑԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՆԸ ԿԲ ՔԱՅՔԱՑՎԻ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՍ. Այդ բանի համար պետք է վճռական պայքար մղեն ընկերության վարչությունն ու խորհուրդը: Փոխառուն պետք է ճիշտ ժամանակին վերադարձնի փոխառվությունը, առանց մեկ որ անգամ ուշացնելու, հակառակ դեպքում ընկերությունը պետք է գասի նրան անճշտապահ փոխառուների շարքը և զրկի նրան իր վատահությունից:

Շատ անգամ պատահում ե, վոր փոխառությունն ոգտագործելու ժամանակամիջոցում փոխառուն զանազան լեկամուտներ ե սուանում: Լավ կը լինի, վոր փոխառուն, առանց ոպասելու փոխառվության ժամկետին, իր պարտքի մի մասը

վճարի այդ յեկամուտներից, վորպեսզի ժամկետը հասնելու որը չդժվարանա միանգամից խոշոր գումար վճարել:

Պատահում են դեպքեր ել, յերբ փոխառուն դրենից անկ լի պատճառներով, վոր մինչև այդ ժժվար երնախառեսել, չի կարողանում իրապարտը վամանակին վճարել: Նման դեպքերում փոխառուն պետք ե նախորոք հայտնի ընկերությանն այդ մասին, ցույց տա փոխառվությունն ուշացնելու պատճառները և խնդրի, վոր ընկերությունը հետաձգի պարտքի ժամկետը:

Ընկերության վարչությունը պետք ե ամենայն ուշադրությամբ քննի յուրաքանչյուր այդ պիսի դիմում և մանրամասնությամբ պարզի գործի հանգամանքները, առանց դեկավարվելու ընդհանուր նկատառություններով, ինչպես, որինակ, այդ տարին. յենթադրենք, ընկերության շրջանում վատ բերք ե յեղել, Վորովինեան, կարող է պատահել, վոր հենց դիմում տված փոխառուի բերքն ավելի լավ յեղած լինի, քան մյուսներինը, կամ գուցե նա ուրիշ յեկամուտներ ե ունեցել: Ցեվ միայն գործն ուշադրությամբ և մանրամասն քննելուց հետո պետք ե ընկերությունը վորոշի փոխառվության ժամկետը հետաձգելու հարցը: Ի հարկե, փոխառուի դիմությանը վորոշի փոխառվության ուշադգինը պետք ե հետաձգի պարտքի ժամկետը: Ցեթե ընկերու-

թյունը վորոշում և հետաձգել պարագի ժամկետը,
այդ դեպքում պետք ե ճշտությամբ վորոշի,
թե պարագի վեր մասը, չերը ե վճարելու փո-
խառուն, մաս-մաս ե վերադարձնելու, թե մի-
անդամից։ Առհասարակ լավ կը լինի, վոր պարա-
գի ժամկետը հետաձգելու դեպքում տնկուների
հետ միասին վճարվի նաև պարագի մի մասը։

Յեթե հետաձգվում ե յերաշխավորությամբ
տրված փոխատվության ժամկետը, պետք ե նոր
ժամկետ նշանակելիս ստանալ յերաշխավորի հա-
մաձայնությունը, յեթե փոխառուն ուրիշ ապա-
հովություն չի ներկայացնում։


Պետք ե ասել, վոր շատ դեպքերում փոխա-
տվությունների ժամկետը հետաձգում են վոչ
հարգելի պատճառներով։ Որինակ, կան ընկերու-
թյուններ, վորտեղ փոխատվության ժամկետը
հետաձգվում ե կեղծ միջոցներով, այսինքն՝ փո-
խառուն ինքը չունենալով պատրաստի փող, ու-
րիշից ե վերցնում և բերում ընկերությանը։ Իսկ
մի քանի որից հետո ել կեղծ նպատակների հա-
մար նա նոր փոխատվություն ե ստանում ըն-
կերությունից և փոխանակ իր տնտեսության
կարիքներին ծառայեցնելու, վերադարձնում ե
այն մարդուն, վորից վերցրել եր պարագը վճա-
րելու համար։

Բայց այդ բոլորից, լինում են դեպքեր, յերբ

փոխառուն ուղղակի ժամանակին չի վճարում իր
 պարտքը, և նույնիսկ նեղություն չի քաշում
 մտնել ընկերության դրասենյակը և խնդրել ըն-
 կերությունից, վոր պարտքը հետաձգվի։ Այդ ա-
 մենավատ վերաբերմունքն ե ղեպի ընկերու-
 թյունը։ Յեթե շատերն այդպիսի վերաբերմունք
 ցույց տան ղեպի ընկերությունը, այն ժամանակ
 վարկային գործը չառ կը տուժի, և վերջն ել
 ընկերությունը կը քայլքաւի։ ՊԵՏՔ Ե ԼԱՎ Ի-
 ՄԱՆԱԼ. ՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԻՑ ՇԱՏ
 ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂԸ ԺԱՄԿԵՏԱՆՑ, ԱՅՍԻՆՔ
 ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶԳԵՐԱԴԱՐՁՎԱԾ ՓՈԽԱՏՎՈՒ-
 ԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

Դրա համար ել ԺԱՄԿԵՏԱՆՑ ՓՈԽԱՏՎՈՒ-
 ԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԵՏՔ Ե ԽԻՍՏ ԿՌՎԵԼ. Իր
 հոժար կամքով պարտքը չվճարողների վերաբեր-
 մամբ պետք ե դիմել ստիպողական միջոցների։
 Վորովհետի ավելի լավ ե խստություն գործ դնել
 մեկի վերաբերմամբ, քան թույլ տալ, վոր վտանգ-
 վեն ընկերության անդամների մեծամասնության
 շահերը։

Բայց և այնպես ժամկետանց փոխատվու-
 թյուններ չեն լինի, յեթե ընկերությունները
 բավականաշափ զգույշ լինեն փոխառվություն-
 ները տարու ժամանակ, և յեթե փող վերցնող-
 ներն ել հետեւն այս կանոնին։ ՓՈՉ Ի՛Պ ՎԵՐՑ-
 ԲԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԺԱՄ ՊԱՏՃԱՐՁՐՈՒ-
 ԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ





A — II
24573

ԳԻՒՆ Ե 10 ԿՈՊ.

034.

